


ՅԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Posted on August 10, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Կարօ Վարդանեան, 1 Օգոստոս 2020

Քիչ առաջ աչքովս ընկաւ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարզանքի նախարար Արայիկ Յարութիւնեանի գրառումը Չօրավար Անդրանիկի եւ ՀՅ Դաշնակցութեան միջեւ եղած սուր հակասութիւնների ու Անդրանիկի շուրջ մշտապէս հիւսուած դաւադրութիւնների մասին: Երեւի թէ չարձագանգէի, եթէ այդ գրառման տակ չտեսնէի դաշնակամերձ շրջանակների բարձրացրած հիստերիան: Ու, ինչպէս միշտ, լայնօրէն շրջանառուեց հանրութեանը քաջ յայտնի կասկածելի հեռագիրը, որի գոյութիւնը տարիներ շարունակ հերքում են ու հերքում: Բայց ինչո՞ւ են կարծում, որ Ա.

Յարութիւնեանը հենց այս հեռագիրը նկատի ունի: Ես չգիտեմ, Ջոն Կիրակոսեանն ու Գեորգ Ղարիբջանեանը ինչո՞ւ պիտի հնարէին նման հեռագիր, երբ նմանատիպ փաստաթղթերով ու վաւերագրերով լեցուն են մեր արխիւներն ու պատմագրութիւնը:

Ստորեւ հարկ եմ համարում ներկայացնել գրեթէ նոյնաբովանդակ, բայց առաւել պերճախօս մի փաստաթուղթ՝ որոշ մեկնաբանութիւններով:

Գրութեան հեղինակը Արշակ Ջամալեանն է՝ ՀՅԴ ղեկավար գործիչներից մէկը, որը 1918-ին ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչն էր Թիֆլիսում: Այսինքն՝ դեսպանը: Ջամալեանն այս նամակը գրել է 1918-ի Սեպտեմբերին, որտեղ նկարագրում է Օգոստոսի 31-ին Խալիլ փաշայի այցելութիւնը Երեւան եւ նրա բանակցութիւնները ՀՀ ղեկավարների հետ: Խալիլը, որի խղճին ծանրացած է հարիւր-հազարաւոր հայերի արիւնը, Թուրքիայի ռազմական նախարար Էնվերի մօրեղբօր որդին էր, նրա աջ ձեռքը: Խալիլը Երեւան էր եկել իր վաղեմի բարեկամ Արամ Մանուկեանի հետ քննարկելու Թուրքիայի համար արդէն 30 տարի մղձաւանջ դարձած Անդրանիկի խնդիրը: Այն Անդրանիկի, ով Յունիսից իր ընդամենը չորս հազարանոց զօրամասով ու երեսուն հազար գաղթականներով ինքնակամ ամրացել էր Սիւնիքում եւ օրհասական մարտեր էր մղում ՀՀ-ի սահմաններից դուրս թողնուած Սիւնիքը պահելու համար:


Խալիլը մոլեգնած է. արդէն երկրորդ անգամն է, որ Անդրանիկը փշրում է թուրքական երազանքը՝ Սիւնիքի վրայով անցնել Բաքու, այնտեղից էլ Միջին Ասիա՝ վերջապէս ստեղծելու համար Մեծ Թուրքիան: Առաջինը 1915-ի Ապրիլին էր, երբ Անդրանիկը Դիլմանի ճակատամարտում ջախջախեց Խալիլի զօրաբանակը, որի կազմում, ի դէպ, կուռում էին նաեւ Գալիպոլիի (Gallipoli) անպարտելի համարուող գնդերը: Էնվերը ծրագրել էր Դիլմանում յաղթելու պարագայում սրընթաց հասնել Բաքու եւ Միջին Ասիա: Զյաջողեց: Անդրանիկը չթողեց: Հիմա կարծես թէ ամէն ինչ կարգին է. հռչակուել է Հայաստանի Հանրապետութիւն՝ 10.000 քառ. կիլոմետր տարածքով, որի կազմում չեն Սիւնիքը, Նախիջեւանը եւ Ղարաբաղը: Կարծես թէ Մեծ Թուրքիա ստեղծելու ճանապարհը բաց է: Բայց Սիւնիքում թուրքը նորից բախում է իր հոգեառին՝ Անդրանիկին, ում Հայաստանի վարիչները օրէնքից դուրս են յայտարարել՝ իրենց չենթարկուելու եւ Սիւնիքը պաշտպանելու համար:

իր ընկեր Խալիլին Արամը Երեւանի կայարանում դիմաւորում է գրկախառնութեամբ ու համբոյրով: Սովահար երկրում նոյնիսկ կարողացել էր ճարել սիրունատես մանկամարդ հայուհիներ, որպէսզի ընդունելութիւնը հնարաւորինս ճոխ լինի:

Խնդրում եմ ուշադիր կարդացէք Ջամալեանի նամակը: Ինչի՞ մասին է խօսուել Խալիլի հետ Արամի բնակարանում: Մեր ղեկավարներն ամէն կերպ արդարացել են, որ Անդրանիկը օրէնքից դուրս է յայտարարուած եւ առաջին իսկ հնարաւորութեան դէպքում նրան պիտի բռնեն ու կանգնեցնեն ռազմական դատարանի առաջ: Խալիլն այնքան է ոգեւորում այդ հաւաստիացումներից, որ առաջարկում է ստեղծել հայերից, ազերիներից ու թուրքերից կազմուած մի միասնական զօրամաս, եւ միասին գնալ Սիւնիք՝ Անդրանիկին ջախջախելու:

Կասէք, որ զարհուրելի է: Եթէ կը գտնուեն մարդիկ, որ կ'ասեն, թէ այս գրութիւնն էլ է կեղծ, պատրաստ եմ բերելու բազմաթիւ այլ փաստեր. օրինակ, թէ 1917-ին, երբ ռուսական բանակը թողեց Արեւմտեան Հայաստանն ու գնաց իր յեղափոխութեան հետեւից, Անդրանիկն ինչպէ՛ս էր կաշուից դուրս գալիս դիվիզիա (զօրամաս-խմբ.) ստեղծելու եւ ռուսների լքած բնագծերը զբաղեցնելու համար, եւ թէ ինչպէս այդ փրկարար ծրագիրը վիժեցրին Աւետիս Ահարոնեանը, Ռուբէն Տէր-Մինասեանը եւ... Արամ Մանուկեանը:

Մեր նոր պատմութիւնը լեցուն է զարհուրանքով ու կեղծիքով: Եթէ երբեւէ այն մաքրուի ու խմբագրուի՝ կեղծիքների միջից իր վիթխարի հասակով վեր է յաննելու մեր ազատարարը՝ Չօրավար Անդրանիկը: Եւ առարկայական չափորոշիչների մէջ էլ ընդգծուած է լինելու մեր ազատագրական պայքարի ողնաշարը՝ Չօրավար Անդրանիկը:



Վերջին գերագանցություն

Մենք այդ Օսմանեան կառավարութեան գիտարանէն միևնույն պահով Էնզլիք փաշային:

Կառավարութեանը

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պատիւ ունի յայտնելու ձեր գերագանցութեանը, յանուն ձեր քաղաքացիութեան, իրազեկ դարձնել ձեզ այն մասին, որ Անգլիանիկ փաշան խուսափել է ձեր կառավարութիւնէն, իմանալով, որ գիտարանէն դատի պիտի եկեալար՝ կռիւ մեր գիտարանէն միևնույն շեղարձակումով համար:

Անգլիանիկ փաշան առնկապատակ Հայերէն կողմէ է առանձին գործարանով, նպատակ ունենալով անցնել Ջուրի կամարը եւ կռիւ ու Մաշտաճի շրջանում միանալ Վանից նահանգաց մարտիկներէ: Եւ մտադիր է ուժեղ բանակ կողմէ, ստեղծել տնտեսապետութիւն եւ յարմարակց մեր պարս: Նկարում ենք միջոցներ մերք առնել նրան գերբնականապէս իրախիտելու համար:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան

Նախագահ՝ Ե. ՔԱՋԱՋՆՈՒՆԻ

Հայաստանի Հանրապետութեան գիտարանէն

Միևնույն պահով՝ ԱՐԱՍ ՓԱՇԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հայաստանի կառավարութեան խորհրդի

Նախագահ՝ ՍԱՀԱԿԵԱՆ

Յուլիսի 17-ին, 1918 թ.

Comments



Arsiné Attarian – 2020-08-14 13:28:24

Այս յօդուածին կարելի է կցել Վահան Թոթովենցի յուշերը Անդրանիկի նուիրուած երբ ինք կուգայ Ամերիկայէն կամաւորներու հետ միանալու ազատագրական պայքարի թուրքերուն դէմ և Անդրանիկ ինչպիսի դաւաճանութեանց կը հանդիպի Հայաստանի պետական այրերէն մնալով առանձինս իր հաւատարիմ զինվորներուն հետ ի դիմաց այդ արիւնարբու թուրքական բանակին: Կը թելադրեմ Գեղարդի խմբագրութեան որ հրատարակեն այդ յոշերը իրենց կայքէջին մէջ որպէս վաւերագրական արխիւ: Յոշերը տպուած են Թոթովենցի երկերու երրորդ հատորին մէջ: Իմ կարծիքով շատ կարևոր արխիւ է և մեր ժողովուրդը պետք է տեղեակ ըլլայ Անդրանիկին հանդէպ եղած անիրաւութեան: